

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարինյ համար	12 ֆր.
սարեկան վեցամսեայ	7 "
Արսասահմանի համար	15 ֆր.
վեցամսեայ	8 "
Ամերիկայի համար	3 ռ.
սարեկան վեցամսեայ	1.50 "

Ծանուցման տողը սուսն չի կրճատվում համար 40 սանթիմ լակ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեսին առէի սակաւներու համար 20 0/0 զեղջ կրուայ:

Հասցեայի համար ձեռք 10 սանթիմ է

# ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՈՅԻՆ. ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԿՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԵՔՇԱՐՋՈՒՄ ԵՒ ԵՎԵՐԻՍՈՒՆ ԵՒ ԵՎԵՐԻՍՈՒՆ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ և գրամոտ կից խնամարարական հասցեից

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պուշկարինյ համար ձեռք 15 ՍԱՆԹԻՄ Արսասահմանի համար ձեռք 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք և չեկ տուիր

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԳԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԻՆԵՏԻԿ ՎՃԱՐԷ

Café Promenade Vienne

Այս շքեղ քաղաքի կը գրանուրի վիճակն Թրանք ժողովք քաղաքին վրայ. կըստանայ զանազան հայերէն թերթեր. Սո հասարակ բոլոր հայ կամարեւելքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն. Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին դիմել հոս, ուր պիտի գտնեն իրենց յարմար դիրքութիւններ և անհրաժեշտ տեղեկութիւններ:

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն ՍԻՈՒԹԻՒՆՆԵՐ

«Հայկական միութիւններ» անունով ընկերակցութիւններ ստեղծելու մօզայի օրերու մէջ, Այդպիսի ընկերակցութիւններ ստեղծվել են Եգիպտոսում, Պարսկում, Բաքուում, և այդ հաստատութիւններէն մինի մէջ գանձողներէն մէկը գրանց շտապութիւնը համարում է իբր փաստ, որ այդ ընկերակցութիւնները մեր կեանքի պահանջն չի արդիւնք են Այդ սխալ է կեանքի պահանջը չէ որ մի քանի տեղ ստեղծվել է մի քանի մարդկանց միութիւն, խոշոր անունով, այլ այն որ ստեղծողներէն ամեն մէկը չէ ուզեցել միանալ եղածին, կամ արդէն ծրագրվածին, ինքն էլ ուզեցել է մի առանձին բան ստեղծել... Իսկ թէ ինչ պատճառով այդ էլ այլահր գիտէ...:

Հայկական միութեան փափագող և գաղափարակից մարդիկ իրանք զանազան անջատ մարմիններ են ստեղծել. Հայերին միացնել ձգտողները իրենք զատ զատ մարմիններ են ստեղծել, գրեթէ բոլորովին նոյն ծրագրով և նպատակով:

Սա զարմալի է, չէ՞. Այստեղ ուրեմն տեղը չէ՞ սանլու, պարոններ, Բաքուի, Պարսկի, Եգիպտոսի «Հայկական Միութիւն» ա-

նուն կրող ընկերակցութիւններ, նախ և առաջ գուր հաստատութեան ձեռք ձեռք գաղափարներն—ձեր անունին, իրարու հետ միացէք. Բոլորիդ նպատակն է բանալ գըպրոցներ, գրադարաններ, հայութեան պատուհասուած մասերին օգնել... ուսանողներ պահել, գրագէտների աշխատութիւններ հրատարակել, ուրեմն էլ ինչի՞ էք զատ զատ մարմիններ ստեղծում. միացէք էլ իր գրային օրինակ տեղ օր իրօք ձեր ստեղծած մարմինները հայ պէսպէս ուժերի միացման և մեծ նիւթական ու բարոյական ուժ ստեղծելու նպատակով են ստեղծվել, բայց ոչ անհատական փառասիրութեան կամ հայ կեանքի վրայ գաղափար չունեցող միամիտ մարդկանց խելքի և երազների ծնունդ է:

Թերթերում տպված են այդ բոլոր «միութիւններ»ի յայտարարութիւնները. բայց, եթէ չեմ սխալվում, գրանց ասող չեղաւ. եղբայր, այս քանի հայկական «միութիւն» է. արգեօք կարելի չէ՞ որ ձեր առաջին քայլը լինի իրարու հետ միանալը. Թէ չէ—երեք հայկական միութիւն կայ՞ երեք էլ հայկական յեղափոխական կուսակցութիւն:

Ուրեմն երեքի փոխարէն մենք հիմա ունինք վեց հայ ընկերակցութիւններ, վեց կուսակցութիւններ—որոնց միացնելը աւելի դժուար պէտք է լինի քան առաջվան երեքինը. Հայի յատկութիւնն է եղածները խոզնել, լինելիքներն չը միանալ. միշտ միութիւն բարբառել—բայց միշտ անջատ մարմին ստեղծել. Այդպիսի հակասութեան մէջ գոնէ միութեան կոչված պարոնները չը պէտք է ընկնէին:

Մեր կարծիքով այդ նորստեղծ «Հայկական Միութիւն»ների առաջին գործը պէտք է լինի—իրարու հետ միանալ, մի ընդհանուր ծրագիր կազմել և այնպէս ասպարէզ գալ ժողովրդի առջև. Հակառակ պարագային գրանք զգալի օգուտ չը պէտք է

տան հայ ժողովրդին—և թերևս աւելի փոստակար լինեն. որովհետեւ աւելի պէտք է ծառայեն ժողովրդի ուժերի բաժանմանը թէ այդ քայլը չանեն, աւելի լաւ կանեն որ իրենց անունները փոխեն, հակասութեան մէջ չընկնելու համար:

Բուլղարիոյ քաղաքներից մէկում մի ճաշարան կայ. որի ցուցագիրն է «Խճաշ-եւոյաշ» (կամաց կամաց), Մի օր ես մտայ այդ ճաշարանը, կերակուրը շատ ուշադրին. տիրոջը նկատողութիւն որի. Ու նա ամենայն լրջութեամբ պատասխանեց.— «Պարոն մեր ճաշարանի անունն է «Խճաշ-եւոյաշ». մենք հաւատարմ ենք մեր ճաշարանի անուն և հետեւողական»:

Խորհուրդ կը տայինք հայ միութեան կանոններին հետեւել այդ ճաշարանագետի օրինակին. Կամ հաւատարմ մնալ իրենց անուն, կամ թէ «Հայկական Միութիւն» փոխանունը փոխեն հայկական անվտանգութիւն... որ յաճախողներն էլ ըստ այնմ ներս մտնեն:

ՎԱՐՈՑ

«ՏԱՍՍ ՏԱՐԻ Հ. Բ. ԴՆՆԱԿՆՈՒԹԻԱՆ, ՄԷՁ»

Յուլիսին այս անունով մի բրոշուր պէտք է յանձնվի տպագրութեան:

Իրօջիւրի նպատակն է, առանց խժժանքի Դաշնակցութիւնը մէջ տեղ գնել իր իսկութեամբ և միեւնոյն ժամանակ փաստել թէ՛ իմ պայքարը սկսված է շատ հին ժամանակից և վերջերս միայն սուր կերպարանք ընդունեց. Ինչպէս է որ բրոշուրի մէջ փաստող դոկումենտները մեծ տեղ պիտի գրաւեն:

Բրոշուրի գինը տպագրութիւնից վերջ 3 ֆրանկ է լինելու. իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր:

Դիմել «Շարժում»ի Խմբագրութեան ՎԱՐՈՑ

Մ Օ Տ Ի Կ Ա Ն Յ Ե Ա Լ Ի Ց

(Արտատպած «Մուրճ»էն)  
(Շար. նախորդ թիւէն)


Անցնենք հրապարակախօսութեան Մինչև 1875—1876 թւականները առաջադ հրապարակախօսութիւնը համարեա չէր հետաքրքրում թիւրքահայերի կեանքով, որոնց դատը նա հէնց այդ թւականից, երբ բռնկեց սլաւոնական ապստամբութիւնը բաղկանեան թերակղզու վրայ, յանկարծ իր ձեռքը առաւ և ուզեց իսկոյն եւ եթ վճռել, Մինչ այդ շատ-շատ, այն էլ երբեմն-երբեմն, կտոր-կտոր տեղեկութիւններ էին տպւում և Պօլսի ազգայինների կեանքից, Բայց ահա Բոսնա—Հերցեգովինան, ապա եւ Բալղարիան ապստամբեցան եւ Ռուսաստանը միջամտեց.— Ինչ հեշտ բան է եղել ապստամբութիւնը եւ երրորդական մեծ պետութիւնների միջամտութիւնը, մտածելին քննից զարթնած մեր հրապարակախօսները եւ բանաստեղծները, Անալոգիական մտածողութիւնը պատրաստ էր. Ինչ հարկ կար ծանր ու բարակ ուսումնասիրել թիւրքահայի առանձնատուկ կացութիւնը, որոշել նրա պայմանների խոշոր տարբերութիւնները, քննել հարցի քաղաքական-դիւանագիտական կողմերը, ի նկատի ունենալ ուժերի յարաբերութիւնը բուն երկրում. մի խօսքով ինչ հարկ կար իմանալ իրական, թէ՛ տղ խոշորոտները եւ այնպէս գործելու եղանակ որոշել. Եւ ահա իր կեանքում երբէք այդ երկիրը չտեսած, թիւրքաց Հայաստանի մասին նոյն իսկ մտաւորապէս ճիշտ վիճակագրական տեղեկութիւններ չունեցող տաղանդաւոր գաղափարախօս Գ. Արմրուին իր շարաթաթերթ «Մշակութիւն» որ ամենաժողովրդական լինելով հանդերձ սկի հազար բաժանորդ էլ չունէր (այնքան գիտակից էր հասարակութիւնը) սկսում է քարոզել որ թիւրքահայերը հետեւեն սլաւոնների օրինակին եւ ապստամբեն, յուսալով Ռուսաստանից օգնութիւն գտնելու և Ալթմ կամ երբէք! գրում էր նա. «Եւ որ վհտեւ դարերով ճշուած հայութիւնը թիւրքիայում դառն փորձով գիտէր թէ իր կացութեան մէջ ո՞ր աստիճան անմտութիւն կը լինէր այդ խիզախ քայլը, ուստի չէր շարժւում.— զայրացած Գ. Արմրուին ներքան մկրտում էր «դիակ» լէջ, աղքատականներով. Յետոյ նա իր տաք



մէն կովկասեան հայ-թաթար պայքարին ալ մասնակից. քրդական Համիտական զինուորներու անխորհուրդ ստեղծումէն յետոյ՝ վերջին քրդական հալածանքն ալ ուրիշ հայ-կական յեղափոխութեան ուրու ակներ զոմակլեան սուրի նման արդէն միշտ գլխին կախ, եւ վերջերս ալ Եգիպտոսի խափը վտանգներ բոլորովին տարբեր վիճակ չը յառաջ պիտի բերէ Սանաի արդէն ապստամբ Ռաքցեղի մէջ. . . Ահա սոսնձք են ճշմարիտ նշանները վերջին անկումին եւ զուք լաւ նշանակեցէք :

ՊԱՊԷ

Վ Ե Յ Ա Մ Ի Ս Պ Ա Ր Ի Չ Ո Ւ Մ



(Տպարարութիւններ)



Յայտնի է որ Պարիզը աշխարհիս ամենախոշոր քաղաքներից մին է Եւրոպայում, Լոնտոնից յետոյ երկրորդը, և չը նայելով այդ հսկայականութեանը նա ճշիշտ պատուութիւն չէ թողնում: Պարիզը կրում է իր զբարթ ընկերների զարթոյց, աշխոյժ գրոջմը և պատճառը հէնց այդ է որ մասյուրութիւն և պաշտօնական շորութիւն չունի ինչպէս եւրոպական միւս մեծ քաղաքները, մանաւանդ Անգլիո-գերմանական և ուսականները: Իրօք պարիզցիները զարմանալիօրէն զարթնում և աշխոյժ է: Ծեր, երիտասարդ, պատանի, մանուկ ուրախ, թուզուռն, միշտ երգող են: Երբ նրանց տեսնում ես այդ տրամագրութիւնները մէջ, բոլորովին հաւատարի չէ գալիս թէ այդ միշտ թուզուռն ժողովուրդը, որ իր սովորական կեանքի մէջ լրջութեան հետք անգամ չէ կրում, դարերի ընթացքում և զնէ քաղաքակրթութեան Եւրոպայի կարգապահութեան մեծ քաղաքներից մէկը և յաճախ առաջին տեղը զբաղեցնում: Ընկերային յառաջընթացի մական յեղաշրջումները մէջ:

Մրանսացիները աշխարհում նմանում է այն զպրոցական շարճերի մանուկին, որ ըստ Երեւոյթի ձեռքը զիրք չէ առնում: Պատի միջոցին ուսուցչին չէ լսում, դասից դուրս միշտ խաղում է, թուզում է, բայց էլի դասարանում առաջին կամ առաջիններից մին է:

Փոքր դպրական տոնների միջոցին ինչպէս «մարդի գրառ» «մի կարեմ», Պարիզը իր ամբողջ մանուկներով, կրններով, ծերերով, պատանիներով զարճանում է. պէտք է տեսնել թէ ինչ մեծ հրճուածքով, անկեղծ ուրախութեամբ, բոլոր հասակի և սեռի ներկայացուցիչները գունաւոր թղթի կտորիկներով, (քօնֆէտի) կախ են մշում: Այդ օրերում պարիզցիները մի քանի միլիոն ֆրանկի թղթի կտորի է վատնում միայն իր գրեթէ մանկական զարճութեան համար: Այդ հսկայական և մանկական անկեղծութեան ու զարթութեան զբոջմը կրող զարճութեան մէջ ամենամեծայլ: հոգեբով բեռնաւորված փարզը իսկ անկարող է դիմանալ, միայն անտարբեր հանգիստեան մնալ: Եւ անկարելի է մնալ: ամէն կողմից երեսիք, գլխիք, բերանիք մէջը կը թափվեն պատանու, օրիորդի, հասուն կնոջ ձեռքից գունաւոր թղթի կտորները և դու կը գիտես, ընդամենը, ինքնապաշտպանութեան, այսինքն ինքք էլ կը գնես թղթիկներ և քեզ զարնողին կը զարնես:

Այդ զանգամային զարթութիւնն է:

Անհաները առանձին առանձին էլ վերցրած ուրախ, զարթ մարդիկ են: առաջին օրերում ինձ պատահում էին, փողոցների մասնաւանդ—երկայեան, մարդիկ, նոյն իսկ յիսուն տարեկան, որ յանկարծ քալած մի

ջոցին սխում էին ուրախ երգ, կամ սուլում: Եւ ապշում էի: Մեղաւում այդ տեսակ մարդկանց ի հարկէ անպատճառ խնթկանում էին:

Եւ այդ ճպտութիւնը անհոգութիւնը, զարթութիւնը ունեցող ժողովուրդը աշխարհիս ամենահարուստ ժողովուրդն է համարում: Ուրեմն նա գիտէ և աշխատելու բառի իսկական նշանակութեամբ:

Ստոր, մանաւանդ քաղաքակրթութեան ստորին աստիճանի վրայ գտնվող ժողովուրդների ներկայացուցիչները ենթարկվում են ֆրանսացու ճպտային յատկութիւններին և միայն այդ յատկութիւնները փոխ առնում: մինչդեռ ֆրանսացիները միայն թէ ճպտու է, թէ ժրջան մեղու և մրջիւն: Ուրախութիւն, զարթութիւն, շարքաշֆիլքական և մտաւոր աշխատութիւն իրար հետ զուգորդելու համար, այնպէս որ մէկը միւսին չը վնասէ, պէտք է ֆրանսացի լինել: ու եւրոպական ոչ մէկ ցնդ կարող է այդ տարբեր յատկութիւնները և ընդունակութիւնները իր մէջ ամփոփել այնպէս ինչպէս ֆրանսացին: Պարիզում կեանքը երբէք չէ դադարում: Գիշեր ցորեկ եւում է: երիտասարդներ, ուսանողներ, մաքի և ֆիլիքական աշխատութեան ներկայացուցիչները պառկում են շատ ուշ: բայց առաւօտեան կրկին նրանք իրենց գործին են: Մարդ ուղղակի ապշում է դրանց մէջ գտնւած էնէրգիայի հսկայական քանակութեան վրա: նա վատնում է անխնայօրէն, բայց անսպառ է: միայնացիները անհատ, իրբեւ ամբոխ, մանաւանդ իր զարճութեան վիճակում, մեզ համար լրջութիւն համարված յատկութեան արտաքին ոչ մի նշան ունի: սակայն նա ստեղծագործողն է ամեն լուրջ

բաների: Ասում են ֆրանսացիները թուրքում է: ինձ անհաւատալի է թուում թէ այդպիսի էնէրգիա, զարթութիւն և ստեղծագործական ընդունակութիւններ ունեցող ժողովուրդ տկարանայ: նա թուզքի է: բայց հարուստ է: և երբ անտեղի պատերազմներին վերջ տրուի ու ֆրանսացիները տաճէ միայն իր ներքին կեանքը բարեկաւելու մասին, նա ամենից լաւ ապրող և յարաւանող ժողովուրդը պէտք է լինի:

ՎԱՐԴՕ

(Շարունակելի)

Ա Ձ Դ

Ազգ. երկսեռ վարճարանաց մրցանակաբաշխութեան հանդէսը տեղի պիտի ունենայ այս կիրակէ, երկու յուլիս, (վաղը) Ս. եկեղեցւոյն մէջ, յետ աւարտման Ս. պատարագի:

Հոգաբարձութիւնն լիայոյս է որ արգոյ հայ հասարակութիւնը պիտի փութայ խմբովին ներկայ գտնուիլ սոյն հանդէսին առ ի քաջալիրութիւն երկսեռ ուսանողաց:



Մասնաւոր Այլկանց կըրթարանի հարցաքննութիւնները պիտի սկսին վաղը, Յուլիս 2 ին և պիտի վերջանան շաբաթէ մը: ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

Շ Ր Զ Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն

Այլիւ պաշտօնակիցներ, Ռուսոնուզի ուսուցչ. մարմինը կը յայտարարէ պուլկարահայ ուսուցչական մարմիններուն թէ ուսուցչական պատմարի բացումը տեղի պիտի ունենայ Վառնա, յուլիս 22ին, օրակարգ ունենալով նախագահի եւ դիւանի ընտրութիւնը: Միւս նիստերուն մէջ պիտի մշակուին կանոնադիրը եւ ծրագիրը:

բարձր է իր նշանակութիւնը, քանզի նա է օժուկ կաթուղիկոսին հանդիսաւոր ծիսակատարութեամբ եւ ասորոց թէ քրդաց յօտ մեծ հեղինակութիւն է վայելում:

Հոն հասնելով մանամանգարը եւ իր հետեւորդները առատօրէն պարգեւատրուելով մեկնեցան, իսկ մենք գիշերեցիք վանքում: նահապետական պարզութեան մէջ ապրող, աշխարհից անջատուած 80 ամեայ, առոյգ եւ քաջատղջ ծերունափայլ կրօնաւորը մեծ ուրախութեամբ եւ սիրալիր մեզ ընդունեց: նա արտասուելու չափ յուզուեց երբ տեղեկացաւ որ ինկիլիզի կոնսուլն էր իր գլխաւոր հ/ւրը: Որչափ մեծ պատիւ զօտանեալ ծերունուն համար, որի քաջելը յոգնել, մթնել էին սպասելով երկար, ալկտալի տարիների շարքում եւ ընթացքում մի այսպիսի բարձրաստիճան հիւրի այցելութեանը: Սա էլ թուրքերէն բոլորովին չէր իմանում, եւ մենք պիտի չկարո-

յանայինք նրա հետ տեսակցել եւ խօսակցել եթէ բարեբախտաբար Մարտիոնի մարդիկներից մինը գործով այնտեղ գտնուելով թարգմանի պաշտօն չկատարէր: Սոսակցութիւնը օրուայ վառ հարցի մասին էր—քրդական խրտումները եւ շարճումները բարի ծերունու էլ լուրջ ուշադրութիւնը գրաւել էին և նա որ ականատես էր եղել Պետրիսան քէզի արիւնանեղ արչաւանքներին, սոսկալի կոտորածներին եւ վանդալական թալանին, իբր 40 տարիներ առաջ, սրտատրոփ նայում էր օրուայ մեծ հարցին վրայ:

Հիւսաւասոր հարցրեց նրա կարծիքը ի մասին չէլիսի նպատակին ու ծրագրին: Մաթրոնը նախ հաստատեց որ մի ինչ որ արտասովոր շարճումներ կան քրդաց միջեւ: Ըթէ—Շէլիք իր մօտ է հրաւիրել ըրորը քուրդ աշխարհների էլ ա զ ա ս ի —ներին—ցեղապետներին խորհրդակցելու, ի մօտոյ կատարուելիք մի արչաւանքի

մասին, բայց թէ այդ խորհրդակցութիւնները խիստ գաղտնի են պահուում: Դարով այն կէտին թէ օրտեղ եւ ում վրայ են յարճակուելու նըրանք: Մաթրոնը աւեց որ ինքը ամենայն զստահութեամբ կարող է եղբակացին թէ քրդերը կը յարճակուեն նախ հայերի վրայ վանում եւ չըջակայներում եւ նրանց հետ իրանց հաշիւը վերջացնելուց յետոյ նրանք կ'արչաւեն Ասորոց վրայ ուրոնք ցանուցրել բնակուած են Տիւրի, Դիւսուս, Բաղ Տէգ. Ճէլօ, Լէին եւ Ջուլամէրիկ գաւառներում եւ թէ արչաւանքից յետոյ կը հաստատուի քրդական լշխմութիւն ընդ հովանեաւ եւ գերիշխանութեամբ սուլթանին, որին շատ ցանկալի էր այդպիսի մի բան եւրոպական միջամտութեանց և օտնձգութեանց իւրերքիսում գրանով վերջ ու վախճան տալու: Իրպէս այդ տեսակ մի բան արդէն կատարուած է եղել և զիպտոսում Պատկառելի ծերունին խօսում

էր փորձառութեամբ ու մեծ հմտութեամբ եւ նրա խօսքերը մեծ տպաւորութիւն թողոցին թագուհու ներկայացուցչի մտքին վրայ: նա համոզուեց որ Շէլիք խաբել էր նրան պարզապէս, իր պերճախօս ճառերովը թագցնելով ամենայն անպիկութեամբ նրանից իր գաղտնի մտքերն ու նպատակները եւ արգելելով նրան թափանցել իր գիտաւորութիւնների խորը: Դրութիւնը լուրջ էր, և հարկ անհրաճեչու էր մի կերպով լուր հասցնել Պոլիս դեսպանին: բայց դա բոլորովին անհնար էր այս ամայի լեռանց գիւններում, ուր նա թափառում էր: Ուստի և նա որոշեց կարելի եղածին արագօրէն վերադառնալ Վան: Գիշերը շատերկար նստեցինք եւ խօսակցութիւնը շարունակուեց գրեթէ մինչեւ հաստիսին: Մաթրոնը պատմում էր սոսկալի մանրամասնութիւններ 1842 թ. մեծ կոտորածից, որից ինքը մազապապուրծ յաջգեղ էր լինել մի կեր-

Կը խնդրուի բոլոր ուսուցչու մարմիններէն որ հաճին հետեւեալ հարցարանին պատասխանը ներկայացնել գիւտնին :

1. Վարժարանին պիտո՞ւնք քանի՞ կը հասնի մտաւարժապետ
2. Վարժարանին հասոյթները ուղղակի եւ անուղղակի .
3. Եկեղեցին ի՞նչ հասոյթ ունի եւ որքա՞ն կը տրամադրէ դպրոցին .
4. Վարժարանին ուսուցիչներուն եւ ուսուցչուհիներուն տարիթուակը . (մինիմում եւ մաքսիմում)
5. Աշակերտներուն թիւը . — մանկ թէ աղջիկ . —
6. Օտար վարժարան յաճախող աշակերտներուն թիւը .
7. Վարժարանին ուսուցիչներուն եւ ուսուցչուհիներուն թիւը . (ա մուսնագած են թէ ոչ եւ տարիքը) .
8. Ո՞ւր առած են իրենց ուսուցիչը .
9. Ուսուցչու թեան վկայական ունի՞ն .
10. Ուսուցիչները եւ ուսուցչուհիները քանի տարիէ ի վեր կը պաշտօնավարեն .
11. Տիրացուներ եւ իրենց պաշտօնը դպրոցին մէջ .
12. Մնայուն եւ այցելու ուսուցիչներ .
13. Վարժարանին մէջ ի՞նչ լեզուներ կը դասախօսուին .
14. Օտարազգի ուսուցիչներ . ի՞նչ ճիւղեր կուսանդեն անոնք .
15. Պուկարանպատակ եւ օտարակապտակ ուսուցիչներ .
16. Եւրոպական լեզու դիպոցներ . կը խնդրուի նաեւ ուսուցիչներէն եւ ուսուցչուհիներէն որ ջանան մինչեւ յուլիս 19-20 ներկայ գտնուիլ Վառնա :

Յարգանք  
 Ուսուցչ. մարմնոյն կողմէն  
 Ասենաղայի Ատենապետ  
 Մ. Պետրոսեան Ս. Ապագեան  
 27 յունիս 1906  
 Ռուստուք

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Ի՞նչ ուսուցչուք. Պ. Խ. — Ձեր յիշած պաշտպանողական նամակը չէ տպագրվելու նրա համար, որ այդ խնդրի առթիւ արդէն

պով. Բրդերի անիղճութիւնը նա մարմնացած անգլոսթիւն էր անուանում. Ազատ լեռնական ձերուկը առանց կեղծ փողի թիկ աշխատեց երեսին շարժեց նրանց գործած մի մեծ աններելի սխալը զոր նա անքաւելի ոճեր» անուանեց, այսինքն այն մեծ սխալը, զոր նրանք գործեցին Լորդ Պարմստոնի օրով, յորժամ պատահել էր ասորոց մեծ ջարդը, թող տալով սուլթանին մարտի այդ թափուած գետերով արիւն արցունքը մի հինաւուրց անպաշտպան քրիստոնեայ ժողովրդեան, որ իր յոյսը դրած էր միայն Մեծ Բրիտանիոյ վրայ. եւ չնչին բաներով զոհացում ստացած համարեցին լինքզինքնին, առանց մի որ եւ է հիմնական բարեփոխում առաջ բերելու ինչո՞ւ, թըշուուտ, նահատակուած, արիւնաքամ եւ քարուքանդ եղած ասորի ժողովուրդի անսանելի վիճակին մէջ, որը յետոյ եղաւ այնքան քան զառա-

պաշտօնական հերքում եղել է. եւ յետոյ զարմանալի է որ պաշտպանողականները այդտեղից են գրվում. բայց ոչ բուն տեղից եւ գրողը հէնց ինքը մտակ ազգական է պաշտպանողին : Մէնք ոչ պաշտպանեալի ե ոչ էլ պաշտպանողի դէմ ու է հակառակութիւն ունինք, եւ կատարեալ անկողմնակալութեամբ ենք վերաբերվում. իսկ ազգականները հողի անկողմն կալ լինին : Եթէ զատր այդ քան արդար է հրամայեցէք դուք Ձեր ստորագրութեամբը պաշտպանեցէք. Վերջապէս ինքը մեղադրվողն էլ ազատ է ինքզինքը պաշտպանելու եւ կարողութիւն ունի :

ԱՄՔԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Հայրիկը եւ իր ստորագրեալները  
 Ընթերցողները կը յիշեն անշուշտ Հայոց կաթողիկոսին կոնգակը Առաջնորդներու եւ փոխանորդներու ընտրութեան առթիւ : Վեհափառին այդ ազատական եւ միանգամայն հայ եկեղեցւոյ հնաւանդ հիմնական օրէնք մը վերանորոգող քայլը հաճելի եղած չէ մեր պահպանողական եպիսկոպոս վարդապետներուն, ի թիւս որոց կը գլխունին համալսարանաւարտ Նահապետ եպիսկոպոսը եւ կարապետ վարդապետ Տէր Մկրտչեանը :

Սեւազլեաստները բողոքագիր մը պատրաստելով գայեթ են վեհարան : Կաթողիկոսը այդ բողոքագիրը պատուտելէն յետոյ գոնե՞րը բանալով յայտնեց թէ վանքի գոնե՞րը բաց են ըմբոստներ կրնան գուրո ելլալ :

Այս երեւոյթին տղեղ լողմը ան է որ գիտութիւն ստացած հոգեւորականները փոխանակ պօրովիզ հանգիստանալու ձերու :

Ջինը չարս Նախասում Էր մեծ յուզմամբ, կարելի է ասել մինչև իսկ արդար զայրոյթով, նա յիշեց 18-2 Լիբանանի մեծ ջարդերը եւ բաղդատութեան գրեց Ֆրանսան Մեծին Բրիտանիոյ հետ, պատմելով ինչ ինչ պէս Նապոլեոն Գ. կայսրը մի ստուար բանակ եւ նաւատորմով ուղարկելով Լիբանան, զբաւել տուեց Բերութ ծովային քաղաքը ստիպելով սուլթանին, որ անաբեկուած էր այդ չըզօր սիրիական ցոյցից, արդարութիւն ընել թերեւս իր կեանքում առաջին ու վերջին անգամն լինելով (ինչպէս նաեւ օսմանեան տարեգրութեանց ու պատմութեան մէջ) բառերուն եւ լիակատար նշանակութեամբը. այն է որ ջարդի գլխաւոր հեղինակները ու թալանի պարագլուխները մի առ մի բռնուելով կարապետի վրայ հանուեցին ի խրատ այլոց. իսկ Լիբանանում հաստատուեց նոր, ինքնուրէն կառավարութիւն ընդ հովանեաւ գլխաւորապէս Ֆրանսայի եւ ապա նաեւ միւս փետութեանց :

(Շարունակելի)

նի կաթողիկոսին ազատական ոգով եղած վերանորոգումներուն ընդհակառակը անոր հակառակորդներ կը հանդիսանան :

Մտրկահոգի եւ ստրկամիտ մարդիկ ամէն վիճակի մէջ նոյն են : Կուզես քարտու համալսարան աւարտեն երբ խառնուածքը ստրկութեան եւ բռնութեան տարրերէն կազմուած է — երբէք կարգին մարդ չեն կրնար բլլալ : Աս ցլմարտութիւնը մեր գիտնական հոգեւորականներուն մէկ շատ խոշոր մասը կը փաստէ իր ձգտումներով, տրամադրութիւններով եւ գործելակերպով :

Անշուշտ Հայրիկ իր կոնդակը ետ չը պիտի առնէ, մահաւանդ որ կովկասահայ ժողովուրդն ալ երբէք չը պիտի համաձայնի իր սանձը նորէն սեւամիտ սեւազլուխներուն ձեռքը տալ : Երանի թէ Հայրիկ իրօք վանքին գոնե՞րը լայն բանար եւ ըմբոստները վանտելէն վերջը ամուր մը գոցէր գոնե՞րը լայն մարդոց ետեւէն, որոնք իր կաթողիկոսութեան ամբողջ ընթացքին մէջ միայն փոսակար խորհուրդ տընողներ եղան :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թուրք գնդապետ մը 300 կանոնաւոր հեծելազորքով եւ 700 անկանոն արաբներէ կազմուած Սապ անցեր է պարսկական Սալիֆ Մէլիքով գաւառը գրաւելու համար, սակայն նահանգապետին յարձակմանը ենթարկուելով ետ քաշուեր է : Նախարարական խորհուրդին մէջ որոշեցին մըջոցներ ձեռք առնել որպէսզի յարաբերութիւնները չը խղուին Պարսկաստանի հետ եւ հրաման ուղարկել հրամանատար Ձեքի փաշայի որ շատ չը յառաջանայ զէպի Պարսկաստան :

— Վրէննայէն կը հեռագրեն որ թուրք եզրկապտական յանձնախումբի մէջ, որուն նպատակէտ սահմանները որոշել, մեծ թիւրիմացութիւններ ծագած են :

— Տամատ փաշային երկրորդ տղան որ Աուլթանի կարգադրութեամբ Բարիզ գնաց Սատտէտին պէյը, իր եղբայրը, ետ վերադառնալ համոզելու, ձեռնուան Պօլիս վերադարձեր է :

Ռ Ո Ւ Մ Ո Ւ Ա  
 Մովսիսի զինուորական ստեանը ամիբալ Ռոտմէնստէլնիկին եւ մնացեալ մեղադրեալները արգարացուցեր է ու պատժեր է միայն չորս սպաներ :

— Էքատէրիի օսլափի նահանգի մէջ քանի մը զէպեր եղած են որ խազախները ցուցարարներու կողմը բռնած են : Հա-

րիւրակ մը մերժած է զինավարժութիւն ընել . եւ հրամանատարը պատուիրած է զանոնք բանտարկել : Աւրիշ հարիւրեակ մը մերժած է ցուցարարներուն վրայ հրազէն պարպել եւ այդ պատճառով տեղափոխուած է :

— Բեթերայուրկէն կը հեռագրեն թէ գիւղացիական խռովութիւնները աստիճանաբար կը սաստկանան. գիւղացիները յաճախ զէպեր կը գիմեն :

— Մօսկուայի մէջ գործաթողներուն թիւը 20000 ի կը հասնի երեք հարիւր խազախ որ շըրկուած էին թակահարող գիւղացիները զսպելու միտած են պիւղացիներուն հակառակ գործելու նոյն իսկ վաշտ մը միացեր է գիւղացիներուն :

ՅՐԱՆՍՍ

Երեսփոխանական ժողովը վերջնապէս քուէարկեց կիրակնօրեայ հանգստութիւնը :

— Հռչակաւոր գնդապետ Բիքար եւ մէնէրալ Գոնսոր առաջինի կողմէն վերաւորանքի ենթարկուած է Տրէյֆուսի դատին պատճառով : Մենամարտ ունեցան : Գոնս վրիպած է, իսկ Բիքար իր ստրճանակը չէ պարպած :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Նկարիչ Ֆէթիֆաճեանի Անիի աւերակների գունաւոր եւ գեղեցիկ աւրօմները եւ փոստ քարտերը 'եծ քանակութեամբ ծախվում են Վիէննայում պ. Գ. Ամատունու մօտ :

Ալրոմի գինը, փոստի մտքով, 3 քրօն է, իսկ փոստ կարտերի հատը փոստի ծախքով 20 հելլէր :

Պէտք է դիմել հետեւեալ հասցէին. Գ. Ա. Մատունուի Սդ. Բուզլը Կաս թիւ 3 գիր 32. Վիէննա

Մ Ո Ւ Ր Ճ  
 Ա Մ Ս Ա Պ Ի Ր  
 Գրական, Հասարակական եւ Քաղաքական  
 Բ ա ժ ն ե գ ի ն ը  
 Արտասահմանի համար տարեկան 12 ռուպլի Վեցամսեայ 7 ռուպլի Հասցէ՝ Ր է տ ա թ ս ի ո ն տ ր լ ա ը Վ ի Մ Ո Ւ Ր Ճ (Կովկաս) Թիֆլիզ

« Ա Ր Մ Ի Ի »  
 Կ ի ս ա մ ս ե ա յ  
 Ազգային, Գրական, Քաղաքական Տարեկան բաժնեկիցն է մէկ տուար Ամերիկայի, 6 Ֆրանք արասահմանի համար :  
 Գիմել հետեւեալ հասցէին՝ Էտիգօր օֆ Պերիւս Բ. Օ. Պօրս 2191, Պոսթօն Մաս